ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ ____31-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի՝

1) 2.2 ենթախումբը լրացնել նոր 33-րդ և 34-րդ կետերով.

«33. Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի զանգերի կենտրոնի պետ (ծածկագիր՝ 03-Հ-2.2-33):»

«34. Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի տեխնիկական սպասարկման բաժնի պետ (ծածկագիր՝ 03-Հ-2.2-34):»

2) 3.1 ենթախումբը լրացնել նոր 41-րդ և 42-րդ կետերով.

«41. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.1-41):»

«42. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.1-42):»

3) 3.2 ենթախումբը լրացնել նոր 564-րդ և 565-րդ կետերով.

«564. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-564):»

«565. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության անձնագրային բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-565):»

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված հավելվածի 3.2 ենթախմբի 1-ին, 38-րդ, 465-րդ և 485-րդ կետերը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և քաղաքացիական հատուկ ծառայության ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«28» 06 2021թ.

ք. Երևան